



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՓՐՈՖ. ՀԱՅՆԱ ՖԵՕԼՆԸՐ ԴԱՍԱԽՕՍԵՅ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՒՅՑ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ՄԱՍԻՆ

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԸ ՇՕՇԱՓԵԼԻ ՆՇԱՆՆ Է ՄԵՐ ՄԻՈՒԹԵԱՆ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ

ԵՃՐԱՓՈՎԿԵՅ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ

Համայնքի մը հոգեւոր կարիքներուն մասին մտածել եւ առ այդ ձեռնարկներ կազմակերպել՝ կը նշանակէ հաւատացեալները հաւատքի ճամբուն առաջնորդել եւ հոգեւորապէս դաստիարակել՝ բարին ու վսեմը իրագործելու: Ահա այս մտածումով առաջադրուած, հովանաւորութեամբ Թեմիս Առաջնորդ Բարձր. Ս. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքին կազմակերպութեամբ, Չորեքշաբթի, 4 Յոկտեմբերի երեկոյեան, Կլենտոյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ սրահին մէջ, տեղի ունեցաւ դասախօսական երեկոյ մը, նուիրուած՝ Հայ Եկեղեցւոյ Ս. Պատարագին: Դասախօսն էր Կիեննայի Համալսարանի դասախօսներէն Փրոֆ. Հայնս Եորկըն Ֆեօլնըր:

Երեկոյեան բացման խօսքը կատարեց Հոգշ. Ս. Պարթեւ Կրդ. Կիլիւմեան: Հայր Սուրբը իր խօսքին առաջին բաժինով նախ պատմականը ըրաւ Հայ Ծեսին, խօսեցաւ անոր կազմութեան ու զարգացման հանգրուաններուն մասին, շեշտելով որ Հայոց Ս. Պատարագը գոհար թագն է Հայ Եկեղեցւոյ ծեսին, որ ներշնչած ու ներգրաւած է ո՛չ միայն Հայ, այլ նաեւ օտար հաւատացեալներ, մինչեւ իսկ՝ փրոֆեսօրներ: Իսկ երկրորդ բաժինով, Հայր Սուրբը ներկայացուց օրուան դասախօսը, զայն նկատելով բարեկամ Հայ ժողովուրդին, եւ հայասեր փրոֆեսօր մը, որ իր ուսումնասիրութեանց առարկան դարձուցած է Հայ Ծեսը, նոյնիսկ իր ակարտաճառը գրած է Հայ Եկեղեցւոյ Պատարագի մասին: Ապա Հայր Սուրբը բեմ հրաւիրեց դասախօսը:

Փրոֆ. Ֆեօլնըր երկիւղածութեամբ խօսեցաւ Հայ Եկեղեցւոյ Պատարագամատոյցին մասին: Ան ըսաւ, թէ Հայոց Ս. Պատարագը գոհար արտայայտութիւնն է Հայ լեզուին ու մշակոյթին, իսկ հոգեւոր գետնի վրայ՝ ան միութիւնն է համայնքին եւ վկայութիւնը Հայոց Զրիստոնեական հաւատքին: Ան խօսեցաւ Հայ Պատարագամատոյցին կրած ազդեցութիւններուն մասին՝ տարբեր ժամանակներու ընթացքին զանազան Զրիստոնեական Եկեղեցիներէ, ինչպէս՝ Երուսաղէմեան, Կապադովկիան, Ասորական, Բիւզանդական եւ Լատինական: Այս ազդեցութիւններու լոյսին տակ, Հայ Ծեսը, սակայն, շաղախուեցաւ Հայ ժողովուրդի

հոգեւոր կեանքին հետ, եւ կազմեց ամբողջութիւն մը, որ մէկ բառով կը բնորոշուի՝ Զայկականութիւն, շեշտեց Փրոֆէսորը:

Դասախօսութենէն անմիջապէս ետք, Զայր Սուրբը հրաւիրեց ներկաները, իբրեւ նշան հաւաքական մասնակցութեան, միասնաբար երգելու «Սուրբ, Սուրբ»ը: Յուզիչ էր պահը, երբ հրեշտակաց երգը հիմա կը հնչէր ներկաներուն ո՛չ միայն շրթներէն, այլեւ՝ հոգիներէն: Ասոր եկաւ աւելնալու, Տիկին Անի Յովակիմեանի կատարողութեամբ, «Տէ՛ր, Ողորմեա» հոգեթով աղաչանքը, որ բոլորի հոգիներու աղաչանքին թարգմանը եղաւ:

Ձեռնարկին եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազան Զայրը: Սրբազանը մեծապէս գնահատեց օրուան դասախօսը եւ անոր խորունկ սերը հանդէպ Զայ ժողովուրդին՝ ընդհանրապէս, եւ Զայ Ծեսին՝ յատկապէս, ինչպէս նաեւ գնահատեց Զրիստոնեական Դաստիարակութեան Գրասենեակը որ իր բնոյթով՝ նուիրուած Զայոց Ս. Պատարագին, երկրորդ ձեռնարկն է որ կը կազմակերպէ վերջին երեք ամսուան ընթացքին. առաջինն էր Ժագ Ս. Յակոբեանի «Ամենդ Մեղապարտ՝ Պատարագ» գիրքին ներկայացումը: Սրբազանը այս ձեռնարկը համարեց «հոգեւոր սերտողութիւն» մը, Ս. Պատարագի մասին անգամ մը եւս խորհրդածելու, հոգեւորապէս մտածելու, որովհետեւ Ս. Պատարագին ընդմէջէն մենք կը հաղորդուինք Զրիստոսի մարմինով ու արեամբ, եւ անով՝ մենք կը միանանք իրարու հետ, Աստուծո՛յ հետ, կ'ըլլանք ապրող մէկ համայնք եւ Աստուծոյ ժողովուրդ:

Սրբազան Զօր «Պահպանիչ»էն ետք, ներկաները միաբերան երգեցին »Զայր Մեր«ը:

Զանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն, որմէ ետք ներկաները հոգեւորոգ ուրախութեամբ վերադարձան իրենց տուները:

PROF. HANS FEULNER LECTURES ON THE ARMENIAN DIVINE LITURGY

HOLY COMMUNION IS THE SYMBOL OF OUR UNITY WITH GOD

CONCLUDED THE PRELATE

A lecture on the Armenia Divine Liturgy took place on Wednesday, October 4, at 7:30 p.m., at St. Mary's Church in Glendale, under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. The event was organized by the Western Prelacy Christian Education Department and featured Prof. Dr. Hans-Juergen Feulner from the University of Vienna, Austria.

Welcoming remarks were made by Very Rev. Fr. Barthev Gulumian who gave a historical background on the rites of the Armenian Church, stressing that the Armenian Divine Liturgy is a gem that has inspired and captured the attention of Armenian as well as non-Armenian scholars. He then introduced Prof. Feulner, describing him as a close friend of the Armenian people and a professor who has thoroughly researched the Armenian Divine Liturgy and written his graduate thesis on the subject.

In his lecture, Prof. Feulner spoke of how the Armenian Divine Liturgy is a beautiful expression of the Armenian language and culture, and a testament to the

Armenian Christian faith. He also spoke on the influences of the rites of various churches on the Armenian Divine Liturgy throughout the years, stressing that regardless of these influences, the rites of the Armenian Church have remained distinctive.

In his closing remarks, the Prelate highly commended Prof. Feulner and his deep affection towards the Armenian people and specifically the rites of the Armenian Church. He also commended the Prelacy Christian Education Department for organizing their second event dedicated to the Armenian Divine Liturgy, the first being a book presentation for "The Innocent Convict, Badarak" by Jacques Hagopian. The Prelate described this event as a spiritual enlightenment, an opportunity for the faithful to reflect on the Divine Liturgy, through which we become united with God and with each other.

The program concluded with the "Bahbanich" prayer and the collective singing of "Hayr Mer", following which the guests enjoyed a reception.